ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/1899/05/23
Նախագահող դատավոր՝ Հ. Այվազյան
Դատավորներ՝ Կ. Ավետիսյան
Ռ. Խանդանյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/1899/05/23**
2026թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
զեկուցող Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ
Լ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ք. ՄԿՈՅԱՆ

2026 թվականի նոյեմբերի 16-ին

գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 15.05.2025 թվականի որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի «ՓԻ ԷՅ ԴԻ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ Կոմիտեի՝ 27.10.2022 թվականի «Հարկային պարտավորությունների հաշվարկման և գանձման առաջադրման վերաբերյալ» թիվ 1517670 վարչական ակտը և Կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի 03.02.2023 թվականի թիվ 9/56 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել 27.10.2022 թվականի «Հարկային պարտավորությունների հաշվարկման և գանձման առաջադրման

վերաբերյալ» թիվ 1517670 վարչական ակտը և Կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի 03.02.2023 թվականի թիվ 9/56 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ավագյան) (այսուհետ՝ Դատարան) 15.05.2024 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 15.05.2025 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 15.05.2024 թվականի վճիռն ամբողջությամբ բեկանվել և փոփոխվել է՝ հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն (ներկայացուցիչ՝ Արման Մնացականյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ու կիրառել «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածը, «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքի 3.1-ին հոդվածը և 11-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ փոստային կապի գործունեության լիցենզիայի շրջանակներում լիցենզավորվում է ինչպես փոստային կապի ծառայությունների գործունեությունը, այնպես էլ սուրհանդակային կապի ծառայությունների գործունեությունը: Փոստային կապի գործունեության լիցենզիա ունեցող անձը կարող է այդ լիցենզիայի շրջանակներում զբաղվել փոստային կապի ծառայությունների և սուրհանդակային կապի ծառայությունների գործունեություններից որևէ մեկով կամ միաժամանակ երկուսով: Ընդ որում՝ լիցենզավորվող անձը լիցենզիա ստանալու հայտ ներկայացնելիս պարտավոր է լիազոր մարմնին հայտնել իր զբաղվելիք գործունեության (գործունեությունների) մասին՝ լիազոր մարմնի համաձայնեցմանը ներկայացնելով իր կողմից տվյալ գործունեության (գործունեությունների) իրականացման կանոնները:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ սույն գործի ապացույցներով հաստատվում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող այն փաստը, որ հայցվոր Ընկերությունն առանց լիցենզիայի իրականացրել է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով սահմանված փոստային կապի գործունեություն, որի համար ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված են տուգանք, ինչպես նաև լիցենզիան տալու գումարի չափով վնասի հատուցում:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 15.05.2025 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել կամ գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Կոմիտեի 27.10.2022 թվականի «Հարկային պարտավորությունների հաշվարկման և գանձման առաջադրման վերաբերյալ» թիվ 1517670 վարչական ակտով արձանագրվել է Ընկերության կողմից առանց լիցենզիայի առկայության լիցենզավորման ենթակա փոստային կապի գործունեություն իրականացնելու փաստ: Արդյունքում, ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 428-րդ հոդվածի 1-ին մասով, Կոմիտեի նախագահի պաշտոնակատարի 31.08.2022 թվականի թիվ 904-Լ հրամանով, որոշվել է հաշվարկել և Ընկերությանը գանձման առաջադրել 30.000.000 ՀՀ դրամի չափով տուգանք՝ որպես հարկային պարտավորություն, ինչպես նաև 3.000.000 ՀՀ դրամ՝ օրենքով սահմանված պետական տուրքի գումարի չափով վնասի հատուցում **(հատոր 1-ին, գ.թ. 63-68)**.

2) Ընկերության տնօրենը 09.09.2022 թվականին հայտարարություն է տվել հետևյալ բովանդակությամբ. *«Ես՝ Փի Էյ Դի ՍՊԸ (ՀՎՀՀ 04225373) տնօրեն Արթուր Ավետիսի Հաբեշյանս, տալիս եմ սույն հայտարարությունը ՀՀ ՊԵԿ ՀՕՀՎ 4-րդ բաժնի աշխատակիցներին, որ Փի Էյ Դի ՍՊԸ-ն զբաղվում է լոգիստիկայի միջնորդական ծառայություններով: Ծառայություններն իրենցից ներկայացնում են միջազգային բեռնափոխադրման կազմակերպմամբ, փոքրածավալ բեռների փոխադրմամբ (մանիֆեստային), լոգիստիկային վերաբերող այլ ծառայություններով: Միջազգային բեռնափոխադրումը կազմակերպվում է բացառապես բեռնափոխադրում իրականացնող ընկերությունների միջոցով, այսինքն միջնորդավճարի դիմաց մատուցվում է հաճախորդներին լոգիստիկ ծառայություններ ինչպես ՀՀ տարածքում, ՀՀ-ից դուրս և դեպի ՀՀ տարածք: Հավաքական բեռների մասով ունենք վարձակալած պահեստային ծառայություններ, որը կիրառվում է բեռերի ժամանակավոր պահպանման համար, մինչև բեռը հասցեատիրոջը հանձնելը: Փոքրածավալ բեռների փոխադրումը կազմակերպվում է հետևյալ կերպ. Փի էՅ Դի ՍՊԸ-Ն ՌԴ ք. Մոսկվայում կազմակերպում է փոքրածավալ բեռների համաքագրում ՌԴ-ում գրանցված գործընկեր կազմակերպության (ИП Карапетян Српуи Мкртичовна) միջոցով, որտեղից տարբեր ֆիզիկական և իրավաբանական անձանց պատկանող բեռները ՀՀ տեղափոխելու նպատակով ընկերության անունով կազմվում է 1 տրանսպորտային հայտարարագիր, 1 CMR, 1 ոչ կոմերցիոն հաշիվ ապրանքագիր, որոնց հիման վրա տեղափոխվում են ՀՀ տարածք՝ ընկերության կողմից օգտագործվող պահեստ, որից հետո հանձնվում է ոչ կոմերցիոն հաշիվ ապրանքագրում նշված հասցեատերերին: Բեռի հանձնվումը իրականացվում է ինչպես պահեստից այնպես էլ մինչև հասցե առաքումով՝ համապատասխան վճարի դիմաց: Բեռի հանձման պահին հաճախորդին տրվում է Բեռի հանձնման բեռնագիր: Գները ֆիքսված չեն. հաշվարկվում են ըստ ծավալի և քաշի: Բեռները փոխադրվում են ինչպես ցամաքով, այնպես էլ օդային և ծովային ճանապարհներով»* **(հատոր 1-ին, գ.թ. 72)**:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի

3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանի կողմից «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի, «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրության 3.1-ին հոդվածի և 11-րդ հոդվածի խախտման արդյունքում թույլ է տրվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, ինչը հաստատվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ փոստային կապի ծառայությունների և սուրհանդակային կապի ծառայությունների մատուցման գործունեության առանձնահատկություններին՝ որպես լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներ:

Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները սահմանվում և լիցենզավորման հետ կապված հարաբերությունները կարգավորում են «Լիզենցավորման մասին» ՀՀ օրենքով:

«Լիզենցավորման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանվեում են օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները, համաձայն որի՝ լիցենզիա է համարվում՝ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով զբաղվելու իրավունքը հաստատող պաշտոնական թույլտվությունը, ինչպես նաև այդ իրավունքը հաստատող պաշտոնական փաստաթուղթը, իսկ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը՝ գործունեության տեսակ է, որի իրականացման համար օրենքով պահանջվում է լիցենզիա:

«Լիզենցավորման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ գործունեության առանձին տեսակներով զբաղվելու լիցենզավորման նպատակներն են՝

1) սպառողների իրավունքների պաշտպանությունը.

2) զարգացող շուկայական հարաբերությունների կարգավորմանը նպաստելը.

3) ապրանքների և ծառայությունների որակի բարձրացումը.

4) անձանց կյանքին, առողջությանը, գույքին, պետության և հասարակության շահերին, բնության, մշակութային ժառանգության պահպանությանն առավել վտանգի սպառնալիքով հղի գործունեության տեսակներով զբաղվողների նկատմամբ հսկողության իրականացումը.

5) միջազգային անվտանգության ապահովման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով լիցենզավորված անձանց գործունեության նկատմամբ հսկողության իրականացումը:

Նույն օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիցենզիան լիցենզավորող մարմնի կողմից լիցենզավորման կարգերին համապատասխան տրվող գործունեություն իրականացնելու թույլտվությունն է, որով սահմանվում են նաև տվյալ գործունեության իրականացման համար պարտադիր պահանջներ կամ պայմաններ, և դրանց պահպանման նկատմամբ իրականացվում է օրենքով սահմանված կարգով հսկողություն:

Նույն օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործունեությունը համարվում է լիցենզավորման ենթակա, եթե այն ընդգրկված է նույն հոդվածի աղյուսակում:

Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանվել է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների աղյուսակը, որի 11-րդ կետի 1-ին ենթակետում ընդգրկված է փոստային կապի գործունեությունը:

«Փոստային կապի մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրության 3-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

փոստային կապ՝ փոստային առաքանու ընդունումը, մշակումը, փոխադրումը և հանձնումն ապահովող կապի տեսակ, որը տեխնիկական և տրանսպորտային միջոցների միասնական արտադրատեխնոլոգիական համալիր է.

փոստային առաքանի՝ հասցեագրված նամակագրական թղթակցություն, փոստային ծանրոցներ ու փոստային բեռնարկղեր, համապատասխան փաթեթավորումով տպագիր հրատարակություններ.

փոստային առաքում՝ փոստային առաքանու ընդունում, մշակում, փոխադրում և հանձնում հասցեատիրոջը.

միջազգային փոստային կապ՝ տարբեր պետությունների իրավասության ներքո գտնվող փոստային կապի օպերատորների միջև փոստային առաքանու փոխանակում.

փոստային կապի ծառայություններ՝ գործողություն կամ գործունեություն փոստային առաքանու ընդունման, մշակման, փոխադրման և հանձնման գծով.

սուրհանդակային կապի ծառայություն՝ փոստային կապի գործունեության տեսակ, որի դեպքում փոստային առաքանին առաքման ամբողջ ժամանակահատվածում՝ ուղարկողից մինչև հասցեատեր, ուղեկցվում է միևնույն իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից.

սուրհանդակային կապի օպերատոր՝ սուրհանդակային կապի ծառայություններ մատուցելու իրավունք ունեցող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որն իր գործունեությունն իրականացնում է փոստային կապի գործունեության լիցենզիայի համաձայն՝ պահպանելով նույն օրենքով սահմանված սուրհանդակային կապի օպերատորի կանոնակարգով սահմանված պայմանները և պահանջները.

փոստային կապի օբյեկտներ՝ փոստային կապի օպերատորի առանձնացված ստորաբաժանումներ՝ փոստի տեսակավորման և փոխադրման կենտրոն, օդանավակայաններին կամ երկաթուղային կայարաններին կից փոստի փոխադրման բաժանմունքներ, փոստափոխանակման կետեր, փոստային բաժանմունքներ, փոստային շարժական կետեր և այլն.

փոստային կապի երթուղի՝ փոստային կապի օբյեկտների միջև փոստային տրանսպորտի երթուղի.

փոստային կապի ցանց՝ փոստային կապի օբյեկտների և փոստային երթուղիների ամբողջություն.

փոստային կապի միջոցներ՝ փոստային կապի ծառայություններ մատուցելու համար օգտագործվող շենքեր, շինություններ, ոչ բնակելի տարածքներ, սարքավորումներ և փոստային տրանսպորտ, փոստային ծրարներ, բացիկներ և փոստային տարա.

սուրհանդակային կապի միջոցներ՝ սուրհանդակային կապի ծառայություններ մատուցելու համար օգտագործվող շենքեր, շինություններ, ոչ բնակելի տարածքներ, սարքավորումներ և տրանսպորտ.

««Փոստային կապի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-157-Ն ՀՀ օրենքի (ընդունվել է 11.05.2011 թվականին և ուժի մեջ է մտել 25.06.2011 թվականին) 3-րդ հոդվածի համաձայն՝ «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքը լրացվել է հետևյալ բովանդակությամբ 3.1-ին հոդվածով. *«փոստային կապի գործունեության տեսակներն են փոստային կապի, պետական սուրհանդակային կապի և սուրհանդակային կապի ծառայությունները»:*

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված օրենքի նախագծում, որպես հիշյալ լրացման հիմնավորում, նշվել է հետևյալը. *«(...) «Փոստային կապի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է (...) Հայաստանի Հանրապետության տարածքում փոստային կապի բնագավառում գործունեության իրավական հիմքերի կատարելագործման հետ՝ հաշվի առնելով փոստային կապի ոլորտի զարգացման ժամանակակից միտումները, փոստային կապի ծառայությունների մատուցման շուկայի զարգացումը, սուրհանդակային կապի ծառայությունը, որպես փոստային կապի տեսակի ընդգրկման անհրաժեշտությունը, ինչպես նաև փոստային կապի բնագավառի իրավական կարգավորման միջազգային փորձը՝ (...): (...) առաջարկվում է փոստային կապի ծառայությունների մատուցման շուկայում հարաբերությունների կարգավորման նոր մոդել, որի համաձայն փոստային կապի ծառայությունները բաժանվում են* ***փոստային կապ և սուրհանդակային կապ ծառայությունների,*** *ինչպես նաև առաջարկվում է մատուցվող ծառայությունների ցանկում ավելացում՝ սուրհանդակային կապի ծառայությունների և մաքսային բրոկերի ծառայությունների մասով: (...) առաջարկվում է ընդգրկել սուրհանդակային կապի ծառայությունների հետ կապված իրավահարաբերությունները «Փոստային կապի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում, (...): Ներկայացվող նախագծի կարգավորման առարկա է հանդիսանում փոստային կապի և սուրհանդակային կապի ծառայությունների մատուցման կարգավորումը, (...): Միաժամանակ, սուրհանդակային կապի ծառայությունների մատուցման լիցենզավորումը հնարավորություն կտա ոլորտում ներգրավել լրացուցիչ մասնավոր ներդրումներ և ապահովել այդ տեսակի ծառայությունների շուկայում առողջ և հավասար մրցակցություն: (...)»* (https://old.parliament.am/drafts.php?DraftID=3921&Reading=0&sel=showdraft&utm_):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ փոստային կապը փոստային առաքանու ընդունումը, մշակումը, փոխադրումը և հանձնումն ապահովող կապի տեսակ է, փոստային առաքանի են նաև փոստային ծանրոցներն ու փոստային բեռնարկղերը, իսկ փոստային առաքումը փոստային առաքանու ընդունում, մշակում, փոխադրում և հանձնումն է հասցեատիրոջը: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ««Փոստային կապի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-157-Ն ՀՀ օրենքի նպատակը սուրհանդակային կապի ծառայությունները, որպես փոստային կապի գործունեության առանձին տեսակ,

սահմանելն է: Սուրհանդակային կապի ծառայության դեպքում փոստային առաքանին առաքման ամբողջ ժամանակահատվածում՝ ուղարկողից մինչև հասցեատեր, ուղեկցվում է միևնույն իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից, իսկ սուրհանդակային կապի օպերատորը սուրհանդակային կապի ծառայություններ մատուցելու իրավունք ունեցող իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերն է, որն իր գործունեությունն իրականացնում է փոստային կապի գործունեության լիցենզիայի շրջանակներում:

«Փոստային կապի մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրության 11-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում փոստային կապի գործունեությունը ենթակա է լիցենզավորման, բացառությամբ պաշտպանության, ոստիկանության և ազգային անվտանգության, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության, դիվանագիտական և հյուպատոսական կարիքների համար նախատեսված փոստային կապի ցանցերի:

Փոստային կապի գործունեության լիցենզիայի շրջանակներում լիցենզավորվում է ինչպես փոստային կապի ծառայությունների գործունեությունը, այնպես էլ սուրհանդակային կապի ծառայությունների գործունեությունը: Փոստային կապի գործունեության լիցենզիա ունեցող անձը կարող է այդ լիցենզիայի շրջանակներում զբաղվել փոստային կապի ծառայությունների և սուրհանդակային կապի ծառայությունների գործունեություններից որևէ մեկով կամ միաժամանակ երկուսով: Ընդ որում, լիցենզավորվող անձը լիցենզիա ստանալու հայտ ներկայացնելիս պարտավոր է լիազոր մարմնին հայտնել իր զբաղվելիք գործունեության (գործունեությունների) մասին՝ լիազոր մարմնի համաձայնեցմանը ներկայացնելով իր կողմից տվյալ գործունեության (գործունեությունների) իրականացման կանոնները (...):

ՀՀ կառավարության 21.07.2005 թվականի «Փոստային կապի գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 1113-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի (այսուհետ՝ Կարգ)՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրության 1-ին կետի համաձայն՝ նույն Կարգով կանոնակարգվում եմ Հայաստանի Հանրապետության փոստային կապի բնագավառում փոստային կապի գործունեության լիցենզիա (այսուհետ՝ լիցենզիա) և լիցենզիային կից համապատասխան ներդիր ստանալու համար իրավաբանական և անհատ ձեռնարկատերերին (այսուհետ՝ հայտատու) ներկայացվող պահանջներն ու պայմանները:

Կարգի 5-րդ կետի համաձայն՝ լիցենզիայի ներդիրները տրամադրվում են ըստ գործունեության հետևյալ ոլորտների (տեսակի)՝

1) փոստային կապի ծառայությունների գործունեություն.

2) սուրհանդակային կապի ծառայությունների գործունեություն:

ՀՀ կառավարության 16.02.2012 թվականի «Սուրհանդակային կապի օպերատորի գործունեության կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 173-Ն որոշման հավելվածի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ)՝ իրավահարաբերության ծագման պահին

գործող խմբագրության 2-րդ կետի համաձայն՝ նույն կանոնակարգում օգտագործված են հետևյալ հասկացությունները՝

3) առաքում՝ գործընթաց, որը ներառում է ուղարկողից սուրհանդակային առաքանու հավաքը կամ սուրհանդակային կապի օպերատորի գրասենյակից՝ տեսակավորումը, փոխադրումը և հանձնումն ստացողին.

4) սուրհանդակային առաքանի (այսուհետ՝ առաքանի)՝ համապատասխան փաթեթավորված և հասցեագրված մեկ կամ մի քանի միավոր առաքանի՝ մեկ ուղարկողից մեկ ստացողին առաքումով, որի երթուղուն և հանձնման գործընթացին կարելի է հետևել.

(…)

14) սուրհանդակ՝ սուրհանդակային կապի օպերատորի աշխատող կամ անձ, որն իրականացնում է սուրհանդակային կապի ծառայություն կամ կատարում է սուրհանդակային կապի օպերատորի առաջադրանքը.

Կանոնակարգի 3-րդ կետի համաձայն՝ սուրհանդակային կապի ծառայություններն ստորաբաժանվում են՝ ներհանրապետական (ընդունվում են Հայաստանի Հանրապետության տարածքում առաքելու համար) և միջազգային (ընդունվում են Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս առաքելու կամ այլ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածքում առաքելու համար):

Կանոնակարգի 12-րդ կետի համաձայն՝ սուրհանդակային կապի օպերատորը սուրհանդակային կապի ծառայություններից օգտվողներին մատուցում է ծառայություններ՝ պայմանագրային հիմունքներով:

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ փոստային կապի գործունեության լիցենզիան փոստային կապի գործունեությամբ զբաղվելու իրավունքը հաստատող պաշտոնական թույլտվություն և համապատասխան փաստաթուղթ է, որը ներառում է նաև սուրհանդակային կապի ծառայությունները: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ փոստային կապի գործունեությունը, որպես լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ, փոխկապակցված գործողությունների ամբողջություն է, որի հիմնական և վերջնական նպատակը փոստային առաքանին հասցեատիրոջը հանձնելն է: Այսինքն՝ «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքի իմաստով այն գործողությունների ամբողջությունը, որը ներառում է փոստային առաքանու ընդունումը, մշակումը, փոխադրումը և հասցեատիրոջը հանձնումը, համարվում է փոստային կապի գործունեության տեսակ և «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի ուժով ենթակա է լիցենզավորման:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ գործունեությունը՝ որպես փոստային կապի գործունեություն որակելու համար էական նշանակություն ունի ոչ թե այն հանգամանքը, թե փոստային առաքանին հասցեատիրոջը հանձնելուն ուղղված առանձին գործողությունները կոնկրետ ում կողմից են իրականացվում, այլ՝ այն, որ տնտեսավարող սուբյեկտը, ստանձնելով առաքանին հասցեատիրոջը հանձնելու պարտավորությունը, կազմակերպում և իրականացնում է այդ նպատակին ուղղված փոխկապակցված գործողություններ՝ անկախ այն հանգամանքից, թե այդ գործողությունները կոնկրետ որ փուլում ում կողմից են իրականացվում: Հետևաբար, փոստային կապի գործունեության տարրեր հանդիսացող՝ առաքանու ընդունումը, մշակումը, փոխադրումը և հանձնումը

տնտեսավարող սուբյեկտի պատասխանատվությամբ այլ՝ առանձին անձանց կողմից իրականացվելը պետք է դիտարկել որպես տվյալ գործունեության իրականացման եղանակ և ոչ որպես տվյալ գործունեությունը փոստային կապի գործունեություն համարելը բացառող հանգամանք:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ փոստային կապի գործունեության տարրեր հանդիսացող՝ փոստային առաքանու ընդունումը, մշակումը, տեսակավորումը, փոխադրումը և հասցեատիրոջը հանձնելը պետք է դիտարկվեն որպես մեկ միասնական և փոխկապակցված գործընթաց, որի վերջնական նպատակը առաքանին հասցեատիրոջը հանձնելն է: Ընդ որում՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ եթե տնտեսավարող սուբկետի գործունեությունը կապված չէ բացառապես բեռի փոխադրման ծառայության իրականացման հետ, այլ զուգորդվում է նաև այն ընդունելու, մշակելու, տեսակավորելու, փոխադրելու և հասցեատիրոջը հանձնելու գործողությունների հետ, ապա նման գործունեությունը կրում է փոստային կապի բնույթ: Հետևաբար տնտեսավարող սուբյեկտը, ստանձնելով նշված գործողությունները կատարելու պարտավորություն և որպես վերջնական նպատակ կազմակերպելով առաքանին հասցեատիրոջը հանձնելուն ուղղված գործողությունների կատարումը՝ սուրհանդակային ծառայության մատուցումը, ըստ էության իրականացնում է փոստային կապի գործունեություն, որը ենթակա է սահմանված կարգով լիցենզավորման:

ՀՀ հարկային օրենսգրքի 408-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համալիր հարկային ստուգումների ընթացքում և (կամ) «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հայտնաբերված՝ «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան լիցենզավորման ենթակա գործունեությունն առանց լիցենզիայի իրականացնելու կամ «Գործունեության իրականացման ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան ծանուցման ենթակա գործունեությունն առանց ծանուցման իրականացնելու կամ առանց թույլտվության կամ առանց լիցենզիայի ընդերքը կամ բնական պաշարներն օգտագործելու (այդ թվում՝ լիցենզիայի կամ թույլտվության գործողությունը կամ ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքն օրենքով սահմանված կարգով կասեցված լինելու) դեպքում գործունեության յուրաքանչյուր տեսակի մասով կազմակերպությունից կամ անհատ ձեռնարկատիրոջից գանձվում է տուգանք՝ լիցենզիայի կամ թույլտվության տրման կամ ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար օրենքով սահմանված պետական տուրքի դրույքաչափի տասնապատիկի չափով, բայց ոչ պակաս 500 հազար դրամից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով սահմանված խախտումն արձանագրելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, խախտման կրկնակի և հետագա փաստը համալիր հարկային ստուգմամբ և (կամ) օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հայտնաբերվելու դեպքում կազմակերպությունից կամ անհատ ձեռնարկատիրոջից գանձվում է տուգանք՝ լիցենզիայի կամ թույլտվության տրման կամ ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար

օրենքով սահմանված պետական տուրքի դրույքաչափի քսանապատիկի չափով, բայց ոչ պակաս մեկ միլիոն դրամից: Նույն հոդվածի կիրառության իմաստով՝ խախտումը համարվում է կրկնակի՝ անկախ լիցենզավորման կամ ծանուցման կամ թույլտվության ենթակա՝ իրականացվող գործունեության տեսակից:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված խախտումներ հայտնաբերվելու դեպքերում խախտումներ կատարած կազմակերպությունից կամ անհատ ձեռնարկատիրոջից գործունեության յուրաքանչյուր տեսակի մասով գանձվում է նաև լիցենզիան տալու կամ ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար օրենքով սահմանված պետական տուրքի (տարեկան պետական տուրքի գանձման օբյեկտի դեպքում՝ մեկ տարվա պետական տուրքի) դրույքաչափին համապատասխան գումարի չափով վնասի հատուցում: Եթե իրականացվում են լիցենզավորման կամ ծանուցման ենթակա մեկից ավելի գործունեության տեսակներ և (կամ) դրանք իրականացվում են մեկից ավելի վայրերում (լիցենզավորման կամ ծանուցման ենթակա գործունեությունը միայն լիցենզիայում կամ ծանուցման մեջ նշված վայրում իրականացնելու՝ օրենքով սահմանված պահանջի դեպքում), ապա պետական տուրքի գումարի չափով վնասի հատուցումը գանձվում է գործունեության յուրաքանչյուր տեսակի և (կամ) գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրի համար առանձին՝ օրենքով սահմանված դրույքաչափերին համապատասխան գումարի չափով: Նույն մասով սահմանված վնասի հատուցումը չի գանձվում նույն հոդվածի 6-րդ մասում նշված դեպքում, ինչպես նաև այն դեպքերում, երբ լիցենզիայի գործողությունը կամ ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքը կասեցվել է օրենքով սահմանված կարգով:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սուրհանդակային ծառայությունների մատուցումը «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի կարգավորման իմաստով փոստային կապի գործունեություն է և ենթակա է լիցենզավորման օրենքով սահմանված կարգով:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն վարչական գործը հարուցվել է Ընկերության կողմից ներկայացված վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել 27.10.2022 թվականի «Հարկային պարտավորությունների հաշվարկման և գանձման առաջադրման վերաբերյալ» թիվ 1517670 վարչական ակտը և Կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի 03.02.2023 թվականի թիվ 9/56 որոշումը:

Դատարանը 15.05.2024 թվականի վճռով հայցը մերժել է՝ պատճառաբանելով, որ *«(...) սույն գործի ապացույցներով հաստատվում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող այն փաստը, որ հայցվոր Ընկերությունն առանց լիցենզիայի իրականացրել է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով սահմանված փոստային կապի գործունեություն, որի համար ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված են տուգանք, ինչպես նաև լիցենզիան տալու գումարի չափով վնասի հատուցում:*

Մասնավորապես, (...) հայցվոր Ընկերության կողմից իրականացվող՝ միջազգային բեռնափոխադրման կազմակերպման և փոքրածավալ բեռների փոխադրման գործունեությունը, որով Ընկերությունը ՌԴ-ում կազմակերպում է փոքրածավալ բեռների հավաքագրում և այդ բեռների տեղափոխում ՀՀ տարածք՝ ընկերության կողմից օգտագործվող պահեստ, որից հետո հանձնում հասցեատերերին, հանդիսանում է սուրհանդակային կապի ծառայություն, քանի որ Ընկերության կողմից իրականացվող գործունեության շրջանակներում փոստային առաքանին առաքման ամբողջ ժամանակահատվածում՝ ուղարկողից մինչև հասցեատեր, ուղեկցվում է միևնույն իրավաբանական անձի՝ Ընկերության, կողմից, որպիսի գործունեությունը «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքով որակվում է սուրհանդակային կապի ծառայություն»:

Վերաքննիչ դատարանը 15.05.2025 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարել է՝ Դատարանի 15.05.2024 թվականի վճիռն ամբողջությամբ բեկանել և փոփոխել է՝ հայցը բավարարել է՝ հետևյալ հիմնավորմամբ. *«(...) վարչական մարմինը վիճարկվող վարչական ակտով ինքն է արձանագրել, որ փոքրածավալ բեռների փոխադրումը կազմակերպվում է հետևյալ կերպ. Ընկերությունը ՌԴ ք. Մոսկվայում կազմակերպում է փոքրածավալ բեռների հավաքագրում ՌԴ-ում գրանցված գործընկեր կազմակերպության (ԱՁ Սրբուհի Մկրտիչի Կարապետյան) միջոցով, որտեղից տարբեր ֆիզիկական և իրավաբանական անձանց պատկանող բեռները ՀՀ տեղափոխելու նպատակով ընկերության անունով կազմվում է 1 տարանցիկ հայտարարագիր, 1 CMR, 1 ոչ կոմերցիոն հաշիվ ապրանքագիր, որոնց հիման վրա տեղափոխվում են ՀՀ տարածք՝ ընկերության կողմից օգտագործվող պահեստ, որից հետո հանձնվում է ոչ կոմերցիոն հաշիվ ապրանքագրում նշված հասցեատերերին:*

Ընդ որում, (...) վարչական գործի նյութերում առկա է «ՓԻ ԷՅ ԴԻ» ՍՊԸ-ի տնօրենի 09.09.2022թ. տրված հայտարարությունն, ըստ որի՝ «(...) Փոքրածավալ բեռների փոխադրումը կազմակերպվում է հետևյալ կերպ Փի էյ Դի ՍՊԸ-ն ՌԴ ք. Մոսկվայում կազմակերպում է փոքրածավալ բեռների հավաքագրում ՌԴ-ում գրանցված գործընկեր կազմակերպության (ИП Карапетян Српуи Мкртичовна) միջոցով, որտեղից տարբեր ֆիզիկական և իրավաբանական անձանց պատկանող բեռները ՀՀ տեղափոխելու նպատակով ընկերության անունով կազմվում է 1 տարանցիկ հայտարարագիր, 1 CMR, 1 ոչ կոմերցիոն հաշիվ ապրանքագիր, որոնց հիման վրա տեղափոխվում են ՀՀ տարածք՝ ընկերության կողմից օգտագործվող պահեստ, որից հետո հանձնվում է ոչ կոմերցիոն հաշիվ ապրանքագրում նշված հասցեատերերին (...)»:

(...) սույն դեպքում չի հաստատվում նաև այն, որ առաքումն իրականացվել է ուղարկողի և սպացողի հասցեն ու հեռախոսահամարը, ինչպես նաև առաքանին բնորոշող տվյալները ներառող ուղեկցող փաստաթղթով և դրա վրա նշված հասցեով; այն, որ հնարավորություն է եղել հետևել փոստային առաքանու երթուղուն և հանձնման գործընթացին:

Իսկ ինչ վերաբերում է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալի 28.09.2022թ. թիվ 03/22/8032-2022 գրությանը, ապա (...) նախ՝ դրանով միայն վկայակոչվել են «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքից, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքից, ՀՀ կառավարության 16.02.2012թ. թիվ 173-Ն որոշումից իրավանորմեր և նշվել է

հայցվորի կողմից իրականացված գործունեության փոստային կապի գործունեություն հանդիսանալու մասին, այլ ոչ՝ սուրհանդակային կապի ծառայություն հանդիսանալու մասին և, բացի այդ էլ, ինչպես վերը նշվեց, չի հիմնավորվում հայցվորի կողմից 2022 թվականին սուրհանդակային կապի ծառայություն մատուցած լինելու փաստը, մինչդեռ վերջինիս վիճարկվող վարչական ակտով վերագրվել է հենց այդ արարքը»:

Սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Ընկերության կողմից իրականացված գործունեության բնույթը պետք է բացահայտել հաշվի առնելով այդ գործունեության բովանդակությունը կազմող գործողությունների ամբողջությունը:

Սույն գործի փաստերից հետևում է, որ Ընկերության տնօրենի կողմից 09.09.2022 թվականին տրված հայտարարությամբ վերջինս հաստատել է այն հանգամանքը, որ Ընկերությունն իրականացնում է միջազգային բեռնափոխադրման կազմակերպմամբ, փոքրածավալ բեռների փոխադրմամբ (մանիֆեստային), լոգիստիկային վերաբերող այլ ծառայություններ: Միջազգային բեռնափոխադրումը կազմակերպվում է բացառապես բեռնափոխադրում իրականացնող ընկերությունների միջոցով, այսինքն՝ միջնորդավճարի դիմաց մատուցվում է հաճախորդներին լոգիստիկ ծառայություններ ինչպես ՀՀ տարածքում, ՀՀ-ից դուրս և դեպի ՀՀ տարածք: Հավաքական բեռների մասով ունեն վարձակալած պահեստային ծառայություններ, որը կիրառվում է բեռների ժամանակավոր պահպանման համար, մինչև բեռը հասցեատիրոջը հանձնելը: Փոքրածավալ բեռների փոխադրումը կազմակերպվում է ՌԴ-ում գրանցված գործընկեր կազմակերպության միջոցով, որտեղից ֆիզիկական և իրավաբանական անձանց պատկանող բեռները ՀՀ տեղափոխելու նպատակով ընկերության անունով կազմվում է 1 տարանցիկ հայտարարագիր, 1 CMR, 1 ոչ կոմերցիոն հաշիվ ապրանքագիր, որոնց հիման վրա տեղափոխվում են ՀՀ տարածք՝ ընկերության կողմից օգտագործվող պահեստ, որից հետո հանձնվում է ոչ կոմերցիոն հաշիվ ապրանքագրում նշված հասցեատերերին: Ընդ որում՝ բեռի հանձնումը իրականացվում է ինչպես պահեստից, այնպես էլ մինչև հասցե առաքումով՝ համապատասխան վճարի դիմաց: Բեռի հանձնման պահին հաճախորդին տրվում է Բեռի հանձնման բեռնագիր, իսկ գները հաշվարկվում են ըստ ծավալի և քաշի:

Այսինքն՝ Ընկերության կողմից մատուցվող ծառայությունը չի սահմանափակվում բացառապես բեռնափոխադրման կազմակերպմամբ: Ընկերության գործունեության արդյունքում հաճախորդին պատկանող բեռը անցնում է հետևյալ՝ միմյանց հետ փոխկապակցված փուլերով.

- բեռը հավաքագրվում է և ժամանակավոր պահպանվում է Ընկերության կողմից օգտագործվող պահեստում, այսինքն՝ օգտագործվում է սուրհանդակային կապի միջոց՝ մասնավորապես՝ սուրհանդակային կապի ծառայություններ մատուցելու համար ոչ բնակելի տարածք,

- այնուհետև կազմակերպվում է դրա միջազգային տեղափոխումը՝ օգտագործելով սուրհանդակային կապի միջոց՝ մասնավորապես՝ սուրհանդակային կապի ծառայություններ մատուցելու համար տրանսպորտ,

- ՀՀ տեղափոխելու նպատակով Ընկերության անունով կազմվում է 1 տարանցիկ հայտարարագիր, 1 CMR, 1 ոչ կոմերցիոն հաշիվ ապրանքագիր,

- բեռը տեղափոխվում է ՀՀ տարածք՝ Ընկերության կողմից օգտագործվող պահեստ, այսինքն՝ օգտագործվում է սուրհանդակային կապի միջոց՝ մասնավորապես՝ սուրհանդակային կապի ծառայություններ մատուցելու համար ոչ բնակելի տարածք,

- վերջում բեռը հանձնվում է կոնկրետ հասցեատիրոջը, այդ թվում՝ վերջինիս հասցեում՝ բեռի հանձնման պահին հաճախորդին տրվում է Բեռի հանձնման բեռնագիր:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության կողմից իրականացված փոխկապակցված գործողությունների ամբողջությունն իր բնույթով համապատասխանում է փոստային կապի, մասնավորապես՝ սուրհանդակային կապի ծառայությանը բնորոշ հատկանիշներին, քանի որ ուղեկցվում և կազմակերպվում է միևնույն իրավաբանական անձի՝ տվյալ դեպքում Ընկերության կողմից, իսկ այն հանգամանքը, որ Ընկերությունը փոխադրման գործունեության առանձին փուլում ներգրավում է ՌԴ տարածքում գործող գործընկերոջ, ինքնին չի փոխում Ընկերության կողմից մատուցվող ծառայության իրավական բնույթը, քանի որ Ընկերության կողմից իրականացվող գործունեության հիմնական և վերջնական նպատակը բեռը հասցեատիրոջը հանձնելու գործընթացի կազմակերպումն է: Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ընկերության կողմից իրականացվող գործունեության նկարագրությունը ներկայացվել է հենց Ընկերության տնօրենի տված հայտարարության մեջ, որում նկարագրված գործողությունների ամբողջությունը թույլ է տալիս եզրահանգել, որ Ընկերության կողմից իրականացվող գործունեությունը նույնացվում է սուրհանդակային կապի ծառայություն իրականացնելու հետ, որը ենթակա է լիցենզավորման, ուստի առանց համապատասխան լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար Ընկերությունը ենթակա է օրենքով սահմանված պատասխանատվության՝ որպիսի իրավաչափ եզրահանգման եկել է նաև Դատարանը: Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ բացակայել են վիճարկվող վարչական ակտն անվավեր ճանաչելու իրավական և փաստական հիմքերը, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը՝ հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ

դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Կոմիտեն վճռաբեկ բողոքի համար վճարել է 30.000 ՀՀ դրամ պետական տուրք: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, որի արդյունքում օրինական ուժ է տրվում Դատարանի վճռին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կոմիտեի կողմից վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումարը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով ենթակա է հատուցման Ընկերության կողմից, իսկ վերջինիս կողմից Դատարանում և Վերաքննիչ դատարանում կատարված դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 15.05.2025 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 15.05.2024 թվականի վճռին՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. «ՓԻ ԷՅ ԴԻ» ՍՊ ընկերությունից հօգուտ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի բռնագանձել 30.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

Նախագահող _____ ***Հ. ԲԵԴԵՎՅԱՆ***

Զեկուցող _____ ***Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ***

_____ ***Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ***

_____ ***Լ. ՀԱԿՈԲՅԱՆ***

_____ ***Ք. ՄԿՈՅԱՆ***